ԲԱԺԲԵՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆԻ ՉԱՐԵՆՑԸ

ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ*

Եղիշե Չարենցին Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի հետ ծանոթացրել էր երգիծաբան Էդվարդ Իսոջիկը, որն այն խառը տարիներին հանգրվանել էր Թիֆլիսում. հեռատես էր եղել Իսոջիկը, Երեւանում աղրելը արդեն վտանգավոր էր դարձել:

Չարենցը, որ նկարչություն սիրում էր ու հասկանում, հիացած է եղել Բաժբեուկի նկարներով, ինչպես պատմում է Իսոջիկը, եւ միայն իրեն հատուկ անզուսպ անմիջականությամբ բացականչել է.

- Տո՛, ի՞նչ Բուշե, ի՞նչ Ֆրագոնար, սա միս ու արյուն է, կյա՛նք է… Դո՛ւ,- ասել է,- Ալեքսանդր, համարյա թե հանճարեղ ես...

Կատակ թե լուրջ՝ բայց ասել է:

Չարենցը, ինչպես արդեն ասացի, նկարչություն սիրում էր ու հավանում, ծանոթ էր եւ ընկերություն էր անում այդ տարիների բոլոր՝ երեւելի ու ոչ երեւելի, անգամ՝ երիտասարդ նկարիչների հետ: Դրա պարզ վկայությունն է նկարիչների այն մեծ խումբը, որոնց նա հավաքել էր «Պետհրատում» իր գլխավորած գեղարվեստական գրականության բաժնի շուրջ՝ սկսած Հակոբ Կոջոյանից, Տաճատ Իսաշվանքյանից մինչեւ Շավարշ Հովհաննիսյան՝ տակավին երիտասարդ նկարիչ: Եւ պատահականություն չէր, որ այն տարիներին հրատարակված գրքերն այդպես էլ չգերազանցվեցին՝ իրենց բարձր հրատարակչական որակով եւ ձեւավորման կուլտուրայով՝ չնայած այդ ժամանակների տպագրական համարյա թե տնայնագործական պայմաններին: Չարենցի ծանոթությանը՝ Բաժբեուկի հետ հաջորդեց վերջինիս ցուցահանդեսը Երեւանում՝ պետական պատկերասրահում, Ռուբեն Դրամբյանի անմիջական օգնությամբ, որ պատկերասրահի տնօրենն էր:

Այսօրվա երեւանցիները հազիվ թե պատկերացում ունենան, թե ինչ ռիսկի ու փորձության հետ էր կապված այդ ցուցահանդեսի բացումը գլուխ բերելը, եթե նկատի ունենանք Բաժբեուկի նկարչության «թեմատիկան», որ ոչ մի առնչություն չուներ «ժամանակի ոգու» հետ, եւ այն, որ արդեն Թիֆլիսում Բաժբեուկի արվեստը համարվում էր «արգելված պտուղ»: Վճռական դերը Չարենցինն էր, որի հեղինակությունն անվիճելի էր «վերեւներում»:

Ցուցահանդեսի բացումը ոչ միայն «արգելված պտուղ» սիրող բերանբացերի համար է եղել «ռումբի նման բան», այլեւ նկարիչների, մտավորականության համար, որոնք ե՛ւ հիացած են եղել, ե՛ւ զարմացած ու շփոթված, քանի որ տե-

* Հայ մեծ նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի այս մի քանի էջ հիշողություններն առաջին անգամ տպագրվել են *Գրական թերթում* (համարն անհայտ է): Տե՛ս նաեւ Իսաբեկյանի կայքի մատենագրության մեջ՝ *Չարենց եւ Բաժբեուկ* վերնագրով (eduardisabekyan.com):

սածները շա՜տ էին անսղասելի, անբացատրելի ու բոլորովին տարբեր, «ուրիշ»՝ իրենց ամենօրյա տեսածներից, ընդունված ստանդարտից:

Ես այդ ցուցահանդեսը չտեսա, ինչպես եւ իրեն՝ այդ հրաշագործին, Բաժբեուկին, բայց «աչքի ոչով» տեսել էի նկարները դեռ չկախված՝ Դրամբյանի թույլտվությամբ եւ իմ ընկեր նկարիչ Սիմոն Գալստյանի օգնությամբ: Վերջինս այն ժամանակ ոստկերասրահում որպես ռեստավրատոր էր աշխատում՝ այդպիսի մասնագետ չլինելու պարզ պատճառով, եւ նկարները մաքրելով, շրջանակները կարգի բերելով էր զբաղված: Ուստի ես հնարավորություն ունեցա մոտիկից տեսնել՝ ձեռքս վերցնելով նկարները (փոքր չափերի էին բոլորը), շոշափելով, «հոտոտելու» պես մի բան, ինչպես ծաղկեփնջեր... Ինձ հետ էլ էր «ինչ-որ բան» կատարվում, որ հետո հասկացա... Իսկ ցուցահանդեսի բացմանը չկարողացա լինել, քանի որ Թիֆլիսի Ակադեմիան էի ընդունվել եւ պիտի հասնեի դասերի սկսվելուն:

Չարենցը ներկա էր եղել ցուցահանդեսին, ինչպես պատմեցին հետո, եւ մեծ շքախմբով շրջապատված՝ մի առանձին շուք էր ստեղծել շուրջը:

Բաժբեուկի հետ (այդպես կրճատ էին կոչում իրեն բոլոր ծանոթները) մեզ, Ակադեմիայում սովորող պատանիներին՝ Արփենիկ Նալբանդյան, Մկրտիչ Քամալյան, Էդդա Աբրահամյան, Կարո Մեծատուրյան եւ ես, ծանոթացրեց Ջոտտոն՝ Գեւորգ Գրիգորյանը, որի հետ էլ ծանոթացել էինք Կարեն Կամսարականի միջոցով: Կամսարականին դեռ Երեւանից գիտեի, պատկերասրահում էր աշխատում, նկարչությանը սիրահարված մարդ էր եւ ամեն անգամ Թիֆլիս գործուղվելիս՝ հանդիպում էր մեզ, հետաքրքրվում մեր աղրուստով եւ օգնում նաեւ իր սուղ միջոցներով:

Մենց առաջին հանդիպմանը Բաժբեուկը - որին մոտ լինելը շա՜տ դժվար էր, չէր սիրում պարապ այցելուների, հազվագյուտ քչերի էր հաջողվում բախտ ունենալ լինելու նրա արվեստանոցում, որտեղ նստելու տեղ չկար, ավելորդ աթոռ չկար, միակն իր զբաղեցրածն էր (երեւի ավելորդ աթոռ չէր պահում, որ այցելողը երկար մնալու հույս չունենար.. .) - մեզ համարյա թէ հանդիսավոր ասաց, որ իր դուռը միշտ բաց կլինի մեզ համար: «Դռներ» չասաց, քանի որ արվեստանոցը մի դուռ ուներ ընդամենը եւ մի լուսամուտ, որ միշտ փակ էր, դռան մոտ էլ մոլբերտն էր դրված: Նեղվածք էր, ընդունարան չուներ, մահճակալն էր մի անկյունում, որի վրա քնում էր... Այդպես էր այդ «համարյա թե հանճարեղ» մարդու վիճակը...

Մեզ ընդունում էր ակնհայտ բարեսրտությամբ. ամեն մեկիս հաճոյախոսություններ բաշխելով, նստեցնելով իր երկաթե մահճակալին՝ նախօրոք կիսատ, նոր սկսած նկարը ծածկում էր եւ խորհրդի ձեւով ասում, որ կիսատ նկարը չի կարելի ցույց տալ՝ «աչքով կտան»: Մենք շարքով թառում էինք մահճակալին, ին-

քը զրուցում էր, հարցուփորձ էր անում մեր «ինչ կա-չկայից», Ակադեմիայից, դասախոսներից, իսկ մենք սկված, աչքներս շռած՝ դատերին էինք նայում՝ առաստաղից մինչեւ հատակը գոհարների դեմ նկարներով ծածկված:

Օ՜, ինչ երջանիկ դահեր էին մեր այցելությունները եւ ի՜նչ լիցքավորում: Չէինք շարաշահում մեր հանդեպ ցուցաբերած մեծահոգությունը. ամիսը մեկ-երկու անգամ էինք այցելում: Չարենցի հետ մտերմացել էինք: Ամեն Երեւան գալուց հանդիպում էինք, անգամ նրա տնային կալանքի ժամանակ: Մի օր էլ, երբ այցելեցինք Բաժբեուկին, ասաց, որ Չարենցը առաջարկել է նկարել իրեն՝ «ընտանյոք հանդերձ», այսինքն՝ խմբակային նկար: Բայց կարծես թե ուրախ չէր: «Փորձ չունեմ նախ,- ասում էր,- եւ հետո՝ դժվար խնդիր է խմբված դիմանկարը, եւ դժվարը ինքն է հատկապես՝ Չարենցը. շատ է բարդ, խորհրդավոր ե՛ւ արտաքինով, ե՛ւ ներքինով, անհասկանալի, անորսալի, Բուդդայի նման ինքնամփոփ, «իր մեջ», հեռու… Դրաժարվել չէի կարող, ասի՝ կմտածեմ»:

Չնկարվեց այդ «ընտանյոք հանդերձը», դատճառը ժամանակն էր թերեւս, որ դարձել էր արդեն «Շագրենի կաշի»…

Չարենցի մասին խոսելիս Բաժբեուկը բոլորովին փոխվում էր, դառնում անճանաչելի, մտազբաղ, խոսքերը, ասելիքը կարծես կշռելով, չափելով: Զարմացած, աղշած էր Չարենցի մտավոր անսահման դիաղազոնից, գիտելիքների հանրագիտարանային ընդգրկումից՝ արվեստի, փիլիսոփայության, լեզվի (հատկապես ռուսերենի), գրականության, համաշխարհային գրականության ճանաչողությունից: Խոսում էր ակնածանքով, խոր հարգանքով. ինքն էլ կարդացած, բնատուր խելքով մարդ էր, բնավորությամբ՝ չհավան, ինքնամփոփ… Չարենցը երեւի թե միակ բացառությունն էր նրա համար՝ ակնածանքի ու հարգանքի արժանի:

Մի անգամ, Չարենցին հերթական այցելությունից հետո, երեւի թե հենց տնային կալանքի ժամանակ, դատմեց, որ լավ չի առողջական վիճակը, ընկճվում է, խորաթես վիրավորված է այդ հրեշավոր, անմարդկային վերաբերմունքից՝ իր եւ մտավորականության նկատմամբ: «Բայց էլի Չարե՞նց է, հանգիստ, անտարբեր խոսել չգիտի, ասածներն էլ գին չունեն, գոհարներ է շաղ տալիս… հազիվ ես հասնում մտքի թռիչքին»:

«Պատահեց, որ,- շարունակեց դատմել Բաժբեուկը,- մեր զրույցի ժամանակ ես մի անզգույշ խոսք բաց թողեցի, դարզաթես ասացի, որ չեմ սիրում Մայակովսկու դոեզիան, «իմ» դոետը չի: Ներեցավ, բարկացավ վրաս եւ կոդիտ խոսք էլ ասեց կարծեմ: Լուրջ նեղացավ, բայց ասաց նաեւ, որ էսօր հոգնած է, վաղը կշարունակենք զրույցը եւ հենց Մայակովսկու մասին. «իսկ հիմա գնա՛, սիրելի՛ս, լավ չեմ»: Մյուս օրը մեր զրույցը Մայակովսկու մասին տեւեց երկուերեք ժամ, գուցեեւ ավելի, եւ խոսողը ինքն էր գրեթե: Սեղանին Մայակովսկու

հատորներն էին, որոնցից ոչ մեկը չբացվեց, չթերթվեց: Երեւի դա է «ֆենոմենալ հիշողություն» կոչվածը. հիշում, արտասանում էր բանաստեղծություններ, պոեմներ՝ հանգ ու ռիթմի մի անսովոր շեշտավորումով, շատ զարմանալի, արտահայտիչ, եւ Մայակովսկու ցրված, ուղղահայաց տողերը (որոնք ինձ ջղայնացնում էին, չէի կարողանում հանգավորել) միանում-լցվում էին, ձուլվում-դառնում ռիթմ ու երաժշտություն: Նա միաժամանակ բացում, մեկնաբանում էր տողատակի չգրված իմաստը՝ համեմատելով նաեւ Մայակովսկուն ժամանակակից բանաստեղծությունների հետ եւ կրկին բերանացի հիշողությամբ ցիտում էր համահնչյուն տողեր, ռիթմեր՝ Խլեբնիկովից, Եսենինից, Բագրիցկուց, Բլոկից, Պուշկինից, Լերմոնտովից...

Օ՜, ուր էր թե հնարավոր լիներ ձայնագրել այդ երեք ժամ տեւած, չգրված, առհավետ կորած, այդ հանճարեղագույն «լեկցիան»՝ ռուսական պոեզիայի եւ Մայակովսկու մասին: Չկա, գնաց կորավ…»

«Երբ վերջացրեց,- շարունակեց Բաժբեուկը,- հետ ընկավ բազկաթոռին, մոմագույն ափով ճակատի քրտինքը շփեց: Փակեց աչքերը՝ մի թույլ, աննշմարելի ժպիտ կոպերի տակ, որ կենդանություն էր տալիս դեմքին: Երեւի գոհ էր, ժպտում էր... Հետո անարյուն ձեռքը հազիվ բարձրացնելով՝ շշնջաց. «գնա՛, հոգնած եմ»: Ես դուրս եկա տանից՝ դուռը կամացուկ, անձայն ծածկելով, որ չզարթնեցնեմ, աչքերը չբացի»:

Այդպես ավարտեց զրույցը Բաժբեուկը, ինքն էլ՝ գունատ ու հուզված, ինքն էլ՝ երեւի հոգնած... Մենք էլ անխոս, անձայն դուրս եկանք տանից եւ երեւի մենք էլ՝ գունատ, մենք էլ՝ ցնցված ու մոլոր...

Դա վերջին հանդիպումն էր եղել նրանց՝ Չարենցի ու Բաժբեուկի:

Էդուարդ Իսաբեկյանը ուսանողական տարիներին